ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ԲՈՒԶԱՆԴԵԱՆ

# ԼՐԱԳԻՐ

# ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

1849 — 9 ԱՊՐԻԼ ՆՈՒՄԵՐՈ — 105 ՋԷՄԱԶԻՒԼ ԷՎՎԷԼ 28 — 1265

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Էվգաֆի տեսուչ վսեմափայլ Պէյ Էֆէնտին բարձրագոյն դրանը գրով ծանուցեր էր, որ Հըրգէ Շէրիֆին սենեակը և տառատաջը նաև ուրիշ քանի մը տեղերը նորոգութեան կարօտ էին։ Նոյն դրան վրայօք գերագոյն ատեանն ալ խորհելով որոշեր էր, թէ հիմակու հիմա խիստ կարեւոր եղած տեղերը նորոգուին, իսկ մեծ ծախքով նորոգուելու կարօտ եղած տեղերը նախ և յառաջ քննուին (քէշֆ ըլլան), ու որչափ ծախքի և բանուորի կարօտ ըլլալը խօսուելէն ետքը՝ շինութեան սկզբնաւորութիւն ըլլայ։

Բայց երբոր առատապատիւ Վեզիրին այս որոշումը իմացաւ, չը հաճելով հրաման ըրաւ, թէ իսկոյն ամէն տեղն ալ նորոգուելու սկզբնաւորութիւն ըլլայ, և պէտք եղածին չափ ալ բաւական որոշելու տաճիկ բանուորներ խրկուին, որովհետև սնանկ շէնքերը ուրիշ շէնքերու նման քննութեան ենթակայ չեն կրնար ըլլալ ըսաւ։

Սոյն գերագոյն ատեանն ալ բստ հրամանի Էվգաֆին որոշեց, որ շուտով մը պէտք եղած դրամը և բանուորները որոշուին ու խրկուին, որպէս զի առանց ժամանակ անցընելու շինութեան սկզբնաւորութիւն ըլլայ, նաև վարպետ երկրաչափ մը ու գերագոյն ատեանին կողմանէ առաջին պաշտօնեայ Րէուֆի Էֆէնտին խրկուին, և այն տեղի կառավարին ալ շինութեան վերատեսչութիւն ընէ, որպէս զի Նորին Վեհափառութեան բարեպաշտ կամացը համեմատ նորոգութիւն վայելուչ կերպիւ որ յառաջ բերինայ։

— Քիւթահիայի նահանգը սպասաւորութիւն ընող Նուրուլլահ պէյին յաջորդելը ու փոխ չորը նախորդներուն Թէրթէրեան մէկուն մէջ յիշած էինք։ Այս օրերս Ալփայի արքունի բանակին ընդհանուր հրամանատար փաշան բարձրագոյն դրանը գրելով կը ծանուցանէ, թէ Թագաւորական զօրքը մինչև հիմա նոյն սպասաւորին ետևէն իյնալով բանկեր կոչխանէին, բայց անիկա Պարսկաստան անցեր էր, վերջապէս հասկընալով որ հոն ալ չը պիտի կրնայ ապաստան ըլլալ, ուստի ուղղակի արքունի բանակը գալով անձնատուր եղեր է։

— Վեհափառ Արքային յատուկ զօրաց բանակին ընդհանուր հրամանատար վսեմափայլ Րէշիտ փաշայէն հիւանդութեամբ ետ առաւ նոյն երևելի պաշտօնը, և յանձնեց ծովային ատեանին նախագահ գահերէց վսեմափայլ Մահմուտ փաշային՝ միւշիրութեան և վէզիրութեան բարձր աստիճանով. նաև իւր ներկայութեամբ կանչեց յիշեալ Մահմուտ փաշան, և իւր պաշտօնին վերաբերեալ փառաւոր նշանն ալ շնորհեց։

— Ծովային ատեանին նախագահութիւնը՝ Արմանէխի գահերէց Րէֆիք փաշային յանձնըւեցաւ՝ վեզիրութեան աստիճանաւ։

Նոյն ատեանին անդամ Մահմուտ պէյը միրի լիվայութեան աստիճանաւ Արմանէխի անուանեցաւ։

— Կայսերական պալատին ատենադպիր յարգապատիւ Մէհմէտ պէյ էֆէնտին առաջին աստիճանին երկրորդ կարգը անցնելով պատուեցաւ։

— Իզմիրու մուհասըլը Օսման պէյին խոհեմ կառավարութիւնը բնակիչներուն ամէնն ալ շնորհակալ ըլլալով՝ վեհափառ Թագաւորին բազմաթիւ մահզար մը մատուցեր էին. ուստի Նորին Վեհափառութիւնն ալ բարեհաճելով՝ Օսման պէյին միրի միրանութեան աստիճանը պարգևեց. նաև Իզմիրու ատեանին անդամ՝ Հաճի Օսման աղային, և այն տեղի երևելիներէն Թիւքօղլուզատէ Հիւսէյին պէյին մենեկապետութեան աստիճաններ տրուեցաւ։

— Նիշան միւտիրի Օսման էֆէնտին առաջին աստիճանին երկրորդ կարգը անցաւ։

— Վսեմափայլ Նաֆիզ փաշային որդի Լատիֆ պէյ էֆէնտին՝ որ Սամանճի գրատունը անցեր էր, երկրորդ աստիճանին երկրորդ կարգը անցնելով նշանն ալ առաւ՝ հաստատեալ կանոնին համաձայն։

— Մարտաքասըքիս ատիկան վսեմափայլ փաշային փեսայն Հասան պէյը՝ որ բարձրապատիւ մեխամէտայի թղթակցութեան գըրասենեակը ընտիր պաշտօնեաներէն մէկն է, առանց նշանի երրորդ աստիճանը ընկալաւ՝ սահմանեալ կանոնին համեմատ։

— Ըռխըսերպագոտեան կողմերուն կառավարիչ վսեմափայլ փաշային քաջ Թարգման գահերէց ու մենեկապետութեան աստիճանը ունեցող Մէլիք պէյին ահուսապետութեան աստիճանը տրուեցաւ։

— Լոպէ զատէ խաճէկեան Մուսթաֆա բէյին էֆէնտին՝ հօրագործութեան ատեանին անդամ եղաւ։

— Հաճի Մէհմէտ արիֆ աղան՝ որ երբեմն Պուր քաղաքին միւտիրքն էր, մենեկապետութեան աստիճանը առաւ։

— Բէզիրի էվվէլ 19ին ժամը իննին ատենները՝ Անատոլիոյ մէջ Մուղլայի Ալեաքողին բռնած մզկիթը կայծակէն զարկեր է. մինարէին երկու կանգունի չափ տեղը շըլելով՝ տակը գտնուած մարմարէ քար մը վրայ իջեր է, և քանի մը ատեներուն ալ կըդմիտրները Թափեր են. բայց մարդու մը վնաս տրված չէ։

— Միլիամբլէյէն մէկուկէս ժամ հեռու գըտնըւած Աչմամոր գիւղին մօտ Գօլէմիս ըսւած դաշտին գոմէշները բանկեր և բեղմնաւորի երրորդ օրը, և խեղ մը տեղ ալ սպիտակ եռանէ մարեր է. նոյն դաշտին մէջ 1100 ոչխար կար, որոց ակռաները ցուրտ հովէն երկաթի բերանը Թէպէտ անոնց վնաս մը չէ եղեր, բայց յետոյ դաշտը վերստին բռնելով ոչխարներուն 800ը այրեր ու 300ը ալ մեռեր են։

— Տիւիթրի անուն նաւապետ մը Անդղիացի վաճառականի պէտք նաւով մը Շիլոյեն Անտալիա պիտի երթար յունվարի եօթնին, և նաւն ալ սուրճ և ուտելիք բեռցած ըլլալով վաճառականի ապրանք էր. օրը անյաջող փչելուն Անատոլուի ծովեզերքը Գօգօրդ ըսած նաւահանգիստը Թէպէտ երկաթ նետուեց, բայց հովին սաստկութենէն երկաթը քշուեցաւ, ու նաւը ցամաքը ինկաւ. նաւուն ապրանքը՝ նաւապետը և նաւաստիքը ազատեցին։

— Հելէնի հպատակ Չանլըճացի Փանայօթ անուն նաւապետ մը իր 700 քիլէնոց նաւը սոյն բեռցընելով Կիպրոսէն Սագըզ և անկէ ալ Լոնտոնի կղզին պիտի գար. Ճէզէլպուրնը ըսած տեղը ցամաքը ինկաւ փետրվարի հինգին. բայց նաւապետը և նաւորդները ազատեցան, նաև 50—60 քուլալ սոյն ու նաւուն արժէն ցամաքը հանուեցին, միայն նաւը խորտակեցաւ։

